ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2025 թվականի N 117-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 23 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» 515–Ն որոշման 1–ին կետով հաստատված հավելվածը, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 11–րդ հոդվածի 3–րդ մասով, 13–րդ հոդվածի 2–րդ մասի «դ» կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1–ին մասի 28–րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 23 (քսաներեք)՝ «Լապտերիկ- մսուր մանկապարտեզ», «Ծիածան-մսուր մանկապարտեզ», «Թոռնիկ Մանուշակ-մսուր մանկապարտեզ», «Ժպիտ-մսուր մանկապարտեզ», «Լուսաստղիկ-մսուր մանկապարտեզ», «Արծագանք-մսուր մանկապարտեզ», «Լիլիթ-մսուր մանկապարտեզ», «Նանուլիկ-մանկապարտեզ», «Լիանա-մսուր մանկապարտեզ», «Արևիկ-մանկապարտեզ», «Գոհար-մսուր մանկապարտեզ», «Փարոս-մսուր մանկապարտեզ», «Անի պարտեզ-մանկապարտեզ», «Կարմիր գլխարկ-մանկապարտեզ», «Հենզել և Գրետել- մսուր մանկապարտեզ», «Սուրբ Մարիամ-մսուր մանկապարտեզ», «Գյումրու մանկիկ-մսուր մանկապարտեզ», «Էյլիթիա-մսուր մանկապարտեզ», «Ձյունիկ- մսուր մանկապարտեզ», «Հուսո առագաստ- մսուր մանկապարտեզ», «Երազանք-մսուր մանկապարտեզ», «Անուլիկ-մսուր մանկապարտեզ», «Զանգակ-մսուր մանկապարտեզ» նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:
2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունների տնօրեններին.
   1) ողջամիտ ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական

անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սույն որոշման 1–ին կետով նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրություններն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում կատարելու խնդրանքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -25 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ**

2025թ. հոկտեմբերի 16
ք. Գյումրի